

անոնք ամփոփ ու պարկեշտ ձեւով մը, եւ կը բուրդէին իրենց պարզունակ սեղանոց շուրջ: Թեբեւս գտնուէին անոցմէ՝ որ կըրկնէին Եղիշէի միանձանց սա խորհրդաւոր բանածեւը. «Ի խաւարային ժամուս զխաւարային կերակուրս խաւարային մարմնոյս տացուք» (215): Անհրաժեշտ հարկ մը բընութեան, որոյ առջեւ մարմնոյ բռնագոյն թշնամիներն անգամ խոնարհելու էին:

4. — Օրինուորիւն սեղանոյ: — Եթէ աշխարհիկ կոչնոց կ'ընկերէր այս հոգեւոր պաշտօնը (աստ, 160), շատ աւելի իրաւամբ պիտի գտնենք զայն վանականաց ճաշին հետ ալ, որոց եւ քահանայից կը պատկանէր առաւելապէս քան այլոց: Մեզ կարեւոր են ասոր թիւն ու ձեւը:

Ա. Թիւր: Ոսկերերանի անապատականք «չեւ նստեալ (կերակրոյ՝) եւ անդրէն յօրհնութիւնսն յորդորին» (Թղթ. Ա, 127). Ինչպէս նաեւ սովոր էին «Գոհանալ զնրմանէն յետ կերակրելոյն» (անդ, 533). հետեւաբար կ'աղօթեն երկու անգամ: Նրմանապէս Եղիշէի միանձունք բազմելէ յառաջ «ի ձայն բարձր փառատրեն զսուրբ Երրորդութիւնն». իսկ յետոյ «յարուցեալ յանպաճոյճ ընթրեացն, միաբանութեամբ ասեն» գոհութեան աղօթքը (215): Սոյն կրկին աղօթից կը հանդիպինք Ղեւոնդեանց